

**«ՍՄԱՐԹ ՀԱՇԻՎ՝ ՍՄԱՐԹ ՀԵՌԱԽՈՍ» ԳՈՎԱԶԳԻՎՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՊԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՄ ԳԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. «Սմարթ հաշիվ՝ սմարթ հեռախոս» գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ վիճակախաղ) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից:
2. Վիճակախաղը ներքոգրյալ պայմանների կատարման պարագայում դրա մասնակիցներին հնարավորություն է ընձեռում ստանալու iPhone X հեռախոս:
3. Վիճակախաղին կարող են մասնակցել Ամերիաբանկի հաճախորդ չհանդիսացող անձինք, ովքեր 2019 թվականի նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ հեռահար եղանակով կբացեն ՍՄԱՐԹ հաշիվ Ամերիաբանկում՝ լրացնելով [smart.ameriabank.am](http://smart.ameriabank.am) կայքէջում տեղադրված օնլայն հայտը:
4. Վիճակախաղի բոլոր մասնակիցներին մինչև ս.թ. դեկտեմբերի 16-ը ներառյալ կտրամադրվեն հերթական համարներ SMS հաղորդագրության միջոցով:
5. Հաճախորդի՝ Վիճակախաղին մասնակցելու իրավունքը ծագում է սույն պայմաններին համապատասխան հերթական համար ստանալուց հետո:
6. Վիճակախաղի ընթացքում հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ում համարը պարունակող փակ կտրոնը պատահականության սկզբունքով կհանվի մասնակիցների համարներով փակ կտրոնները պարունակող արկղից:
7. Վիճակախաղի արդյունքում հաղթող ճանաչված համարը կիրապարակվի Ամերիաբանկի կայքում և ֆեյսբուքյան էջում մինչև ս.թ. դեկտեմբերի 17-ի ժամը 23:59:
8. Հաղթող հաճախորդի հետ Բանկի աշխատակիցը կապ կհաստատի Բանկում գրանցված հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստի հասցեով:
9. Մրցանակը ստանալու համար հաղթող ճանաչված հաճախորդը պետք է անձամբ ներկայանա Ամերիաբանկի Կամար մասնաճյուղ (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 2, Կամար բիզնես կենտրոն) մինչև ս.թ. դեկտեմբերի 27-ը ներառյալ: Ներկայանալ չկարողանալու դեպքում հաճախորդը պետք է նախապես համաձայնեցնի Բանկի հետ մրցանակն ավելի ուշ ստանալու հնարավորությունը: Մրցանակը ստանալու պահին հաճախորդը պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ:
10. Վիճակախաղի բոլոր մասնակիցներին կտրամադրվեն **MasterCard Gold** վճարային քարտեր՝ անվճար սպասարկմամբ: